Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Հ. Այվազյան

Digitally signed
by AYVAZYAN
HOVSEP

ՀՀ Արմավիրի մարզի «Տանձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Դասարանի ղեկավարի տարեկան աշխատանքային <u>ՊԼԱՆ</u>

2023-2024 ուստարի

Դասարան՝ 4-րդ
Դասվար՝ Հ. Ֆրանգյան

ԴԱՍՂԵԿԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձ-նահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրո-նային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) *Դասարանը բաղկացած է 25 սովորողներից: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ձևավորված է աշակերտական կոլեկտիվ: Դասարանը ունի ավանդույթներ, ակտիվ են ներդպրոցական կյանքում: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին, պահպանում են դպրոցի ներքին կարգապահական կանոնները:*

2. **Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:** *Աշխատանքները բխում են դպրոցի զարգացման ծրագրից, աշխատանքային տարեկան պլանից: Դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, զրուցել ծնողների հետ դաստիարակչական ընդհանուր հարցերի շուրջ, որոնք կնպաստեն աշակերտների օրինակելի վարքագծի ձևավորմանը, գիտելիքների ձեռքբերմանը, կարողությունների հմտությունների զարգացմանը: Առաջադիմությամբ ցածր և /կամ/ դժվար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի հաղթահարեն դժվարությունները: Դիտարկել սովորողների կրթության առանձ-նահատուկ պայմանների կարիքը մասնագիտական աջակցող խմբի հետ: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ և գծեր՝ հայրենասիրություն, կարգապահություն, հանդուրժողականություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն, փոխօգնություն, խաղաղության մշակույթ:*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

3.2 **Գեղագիտական դաստիարակություն** *Ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ի՞նչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ՝ դասղեկական դասերը հագեցնելով արվեստի գործերով,երաժշտականությամբ,էսթետիկ զրույցներով:*

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն** *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Մշտապես հիշեցնել մեր հերոսների անունները և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը, խոսել ռազմարվեստի մասին:*

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն** *Դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց*

ֆիզպատրաստությանը, կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և առողջ ապրելակերպի, սննդակարգի միջոցով:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն** *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:*

3.6 **Բնապահպանական դաստիարակություն** *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և որ այդ խնդիրը գլոբալ է և բոլորինս է, պետք է սովորեցնել պահպանել մաքրություն,չաղտոտել բնությունը, շրջակայքը:*

4. **Դպրոց-ընտանիք կապը** *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ պետք է սերտ լինի դպրոց - ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ կրթվեն:*

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Դպրոցական կարգուկանոնի ներկայացում,դասարանական կանոնների մշակում,դասվար-աշակերտ կապի ամրապնդում:	7 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
II	<<Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք	14 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
III	<<Եթե ես լինեի …>> թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	28 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
IV	<<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ կարողություններն են ավելի զարգացած:	5 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
V	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	12 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VI	<< Բնական պաշարներ >> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ:	19 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VII	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների	2 նոյեմբեր	աշակերտ դասղե

	մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:		
VIII	<< Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:	9 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
IX	<< Էկոլոգիական հիմնախնդիրներ >> : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:	16 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
X	<< Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջ ավայրը>> ասոցացնել հին և նոր դասը տալ խ նդրին նոր լուծումներ:	23 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XI	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժ ևորել արժե համակարգ ինչպես նաև կարող անալ կատարել ինքնավերլուծություն:	30 Նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XII	<< Գնահատվող մրցույթ >> թեման հնարավոր ություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքները:	7 դեկտեմբ եր	աշակերտ դասղեկ
XIII	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնակա ն աղետների առաջացման պատճառները և դ րանց հետևանքները:	14 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XIV	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձ ևավորել բարին և դրական հատկանիշները:	21 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XV	<< Ազգ և պետություն >> թեմայով բաց քննար կում և վերլուծություն:	11 հունվար	աշակերտ դասղեկ
XVI	<< Փոքրիկ պատմություններ անհատի և հաս արակության խնդիրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	**18** հունվար	աշակերտ դասղեկ
XVII	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	25 հունվար	աշակերտ դասղեկ
XVIII	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	1 փետրվա ր	աշակերտ դասղեկ հոգևոր հովիվ
XIX	<< Լրատվամիջոցներ և կերպարներ >> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը:	8 փետրվար	աշակերտ դասղեկ

XX	<< Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:	15 փետրվար	աշակերտ դասղեկ
XXI	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	22 փետրվար	աշակերտ դասղեկ
XXII	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ:	29 փետրվար	աշակերտ դասղեկ
XXIII	<< Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը կհասկանան թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ:	7 մարտ	աշակերտ դասղեկ
XXIV	<< Ինչու՞ է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	14 մարտ	աշակերտ դասղեկ
XXV	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները:	21 մարտ	աշակերտ դասղեկ
XXVI	<< Գնահատվող մրցույթ >> աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները կկարողանան խմբում հաջողությունն ապահովելու համար:	4 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXVII	<< Նախապաշարումների ոստյան >> ներկայացնել թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել:	11 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXVIII	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	18 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXIX	<< Պետք է խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	25 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել հայոց պատմական տխուր դեպքերին :Խոսել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի մասին: Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	2 մայիս	աշակերտ դասղեկ

XXXI	<< Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ հարգանք մարդասիրություն:	16 մայիս	աշակերտ դասղեկ
XXXII	<<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	23 մայիս	աշակերտ դասղեկ
XXXIII	« Ի՞նչ մասնագիտություններ կան» սովորողները կհասկանան՝ թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ/ուսուցիչ,զինվորական/ , այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ , որ կարևոր են բոլոր մասնագիտությունները:	մայիս	աշակերտ դասղեկ
XXXIV	<< Ուսումնական տարին ավարտում ենք ձեռքբերումներով >> խորագրով թեմայի շուրջ զրույցներ,ուրախանալ միմյանց ձեռբերումներով,ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեվերջյան ամփոփում	մայիս	աշակերտ դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Օր	Դասղեկի կողմից նախատեսված միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
6. 09. 2023թ.	Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցում. <<Մեր դպրոցի ճանապարհները և նոր երթուղիները>>:	
14. 09. 2023թ.	<<Անկախության ուղին>> թեմայով զրույց:	
28. 09. 2023թ.	Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգում:	
5. 10. 2023թ.	Սովորողների տեղաշարժը խմբերով և շարասյուներով:	
12. 10. 2023թ.	Զրույց. <<Ուսուցչի տոն>>,:	
19. 10. 2023թ	Զրույց.<<Թարգմանչաց տոն>> թեմաներով	
02. 11. 2023թ	Վարորդի աշխատանքը:	
9. 11. 2023թ	Աշակերտների տեղափոխությունը բեռնատար ավտոմեքենայով:	
16. 11. 2023թ	Վարորդների նախազգուշացնող ազդանշանները:	
23. 11. 2023թ	Ավտոմեքենաները և մոտոցիկլները, հատուկ ազդանշանային կանոններ:	

30. 11. 2023թ	Գործնական պարապմունք հատուկ գծանշված հրապարակում:	
07. 12. 2023թ.	Զրույց. <<Ինչ է երկրաշարժը,ինչպես պաշտպանվել>>թեմայով	
14. 12. 2023թ..	Էքսկուրսիա քաղաքում	
21. 12. 2023թ	<<Ամանորի և սուրբ ծննդյան հեքիաթը>>	
11. 01.2023թ.	Ճան.երթ. կանոն<<Հանրագումարային պարապմունք>>	
18. 01. 2024թ	<<Համագործակցային ուսուցում>>: Ինչպես Կոկոն թիմի անդամ դարձավ	
25. 01. 2024թ	Զրույց.<< Բանակը երկրի կայունության երաշխավորն է>>:	
8. 02. 2024թ	<<Արդյունավետ հաղորդակցում>> թեմայի ուսուցում:	
15. 02. 2024թ..	Զրույց. <<Տյառընդառաջ տոնի խորհուրդն ու ավանդույթները>>:	
22. 02. 2024թ	Ակցիա. <<Նվիրիր գիրք>>,<<Մայրենիի օր>>:	
29. 02.2024թ..	Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում	
07. 03. 2024թ.	Թեմա.<<Ես սիրում եմ մայրիկիս>>:	
14. 03. 2024թ.	<<Կոնֆլիկտների հաղթահարում>> թեմայի ուսուցում:	
21. 03. 2024թ.	Զրույց. <<Մորս սրտի հետ աշխարհն եմ չափել>>:	
04. 04. 2024թ.	<<Մասնակցություն, ակտիվ քաղաքացիական դիրքորոշում>>:	
11. 04. 2024թ	<<Միջնորդություն>> թեմայի ուսուցում: <<Հովանոցը>>:	
18. 04. 2024թ..	Սուրբ Զատիկ>> տոնի խորհուրդն ու ավանդույթները:	
25. 04. 2024թ.	<<Երեխայի իրավունքները թեմայի ուսուցում>>: <<Երեխաների իրավունքների պաշտպանություն>>:	
02. 05. 2024թ.	Զրույց. <<Աշխատավորների տոն>>	
16. 05. 2024թ	Զրույց. <<	
23. 05. 2024թ..	<<Մայիսյան հաղթանակներ>> թեմաներով:	
23. 05. 2023թ	Զրույց. <<Ի՞նչն է ինձ ուրախացնում>> թեմայով:	

ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ

Աշակերտի ազգանուն անուն	Խմբակ
Հայրապետյան Հարություն	Շախմատ
Մկրտումյան Խաչիկ	Երաժշտական դպրոց
Առաքելյան Աննա	Պար
Վարդանյան Եվա	Պար
Սեդրակյան Ռուբինա	Շախմատ
Գրիգորյան Շուշաննա	Պար
Պետրեսյան Լուսիկ	Պար

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ

Նախագահ՝	Գասպարյան Արմինե
Անդամներ՝	1. Սողոմոնյան Նարինե 2. Թորոսյան Մարիամ 3.Հակոբյան Սաթեն 4.Մկրտչյան Զեփյուռ